

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 18-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

**Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝**

<b>Ասատրյան Լիլիթ</b>	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
<b>Ջադոյան Կարեն</b>	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
<b>Ջարուհի Արմաղանյան, Լիա Խաչատրյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Ջարգացում և ինտեգրացիա» ՀԿ
<b>Համբարձումյան Սասուն</b>	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
<b>Հովհաննիսյան Միհրան</b>	«Եղվարդ» ՋՕԸ
<b>Մախյան Նարինե</b>	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
<b>Մովսիսյան Կարինե</b>	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
<b>Միքայելյան Շիրակ</b>	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
<b>Շահինյան Պողոս</b>	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
<b>Ոսկանյան Արման</b>	«Տավուշի զարգացման» ՀԿ
<b>Թամարա Աբրահամյան, Անդրանիկ Վերանյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
<b>Տեր-Հովակիմյան Ալեքսանդր</b>	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ

<b>Նիստից բացակայում էին</b>	
<b>Ենգիբարյան Վիկտոր</b>	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
<b>Նազարյան Հազարապետ</b>	«Եղեգնաձոր» ՋՕԸ
<b>Դազարյան Տոնական</b>	«Շենիկ» ՋՕԸ

<b>Նիստին մասնակցում էին նաև.</b>	
<b>Արա Հովսեփյան</b>	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
<b>Վիկտորյա Գրիգորյան</b>	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<b>Հասմիկ Ասլանյան</b>	«Շողեր» ՀԿ
<b>Նաիրա Ալթունյան</b>	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Հայաստան

Նիստին մասնակցում էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ:

ՇԽ նոր կանոնակարգի համաձայն՝ յուրաքանչյուր հաջորդ ՇԽ նիստի նախագահող ընտրվում են ՇԽ անդամները ըստ անունների այբենական կարգով: ՇԽ ճող նիստը նախագահող ընտրվեց Արման Ոսկանյանը:

Նախագահողը ՇԽ անդամներին ներկայացրեց իր մոտ եղած երկու լիազորագրերը՝ Ջարուհի Արմաղանյանը հանդես կգա որպես ՇԽ անդամ Լիա Խաչատրյանի լիազոր ներկայացուցիչ և Թամարա Աբրահամյանը որպես Անդրանիկ Վերանյանի լիազոր ներկայացուցիչ:

Նախահագողն առաջարկեց նաև հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը: ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանը առաջարկություն ներկայացրեց օրակարգի վերաբերյալ՝ որպես օրակարգի 4րդ

հարց ներառել ՇԽ նախորդ նիստի քննարկումներից դուրս մնացած հարցը՝ շահերի բախման և էթիկայի հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ:

Ընդունելով վերոնշյալ առաջարկությունը՝ օրակարգը հաստատվեց միաձայն:

N	Սկզբը	Օրակարգի հարց	Կցվող փաստաթղթեր	Ձեկուցող/ պատասխանատու
1.	15:00	ՀՄՀ-Հայաստանի տարեկան հաշվետվության ներկայացում	Տարեկան հաշվետվությունը	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյան
2.	15:30	ՀՄՀ-Հայաստանի աշխատակիցների՝ ՀՄՀ-Վրաստան կատարած այցելության վերաբերյալ տեղեկատվության ներկայացում	ՀՄՀ-Վրաստան ծրագրի իրականացման քարտեզը	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյան
3.	16:00	ԿԽ ղեկավարների 10-ի նիստի արդյունքների ներկայացում	Նիստի արձանագրությունը	<i>ԿԽ անդամներ</i>
4.	16:30	Շահերի բախման հարցերի հանձնախմբի ստեղծում		
5.	17:00	Վարկային բաղադրիչի հետագա գործունեության քննարկում	Տեղեկանքներ՝ տրամադրված վարկերի և Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման ենթաբաղադրիչի վերաբերյալ	
6.	17:30	Այլ հարցեր		

**Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ**

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ ՀՄՀ-Հայաստանի ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Ա. Հովսեփյանը: Նա ներկայացրեց ՀՄՀ-Հայաստանի տարեկան հաշվետվությունը. առանձնացվեցին ծրագրերի իրականացման ուղղությամբ հիմնական աշխատանքները, ձեռքբերումներն ու առաջընթացը, առաջին շինարարական աշխատանքների ավարտը և այլն:

Առաջարկություն եղավ ի գիտություն ընդունել ՀՄՀ-Հայաստանի ՊՈԱԿ-ի տարեկան հաշվետվությունը: Առաջարկությունը դրվեց քվեարկության և միաձայն հաստատվեց:

ՀՄՀ-Հայաստան տարեկան հաշվետվության վերաբերյալ Թ. Աբրահամյանը առաջ քաշեց այն հարցը, թե ինչու հանրային մոնիտորնգին վերաբերող արդյունքները տեղ չեն գտել հաշվետվության մեջ:

Ա. Հովսեփյանը նշեց, որ հաշվետվության մեջ կա հանրության իրազեկման գործընթաց բաժինը, որտեղ ներկայացված է շահառուների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, մասնավոր ոլորտի, դոնոր կազմակերպությունների հետ ընթացող հանրային իրազեկման գործընթացի սկզբունքային խնդիրները և արդյունքները:

ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանն իր հերթին նշեց, որ անկախ հանրային մոնիտորնգները տեղամասերում միանշանակ ողջունելի են, սակայն անհրաժեշտություն չկա նման փաստաթղթերը կցել ՀՄՀ-Հայաստանի տարեկան հաշվետվությանը. դրանք կարող են հրապարակվել այլ ձևաչափերով:

**Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ**

ՀՄՀ-Հայաստանի ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Հովսեփյանը ներկայացրեց իր թիմի այցը Վրաստանի գործընկեր կազմակերպություն՝ ծանոթանալու ընթացիկ աշխատանքներին, քննարկելու ընդհանուր խնդիրները և հուզող հարցերը: Ա. Հովսեփյանը կանգ առավ ՀՄՀ-Վրաստանի այն ծրագրերի վրա, որոնք հետաքրքրական և շահավետ էին Հայաստանի համար:

ՇԽ անդամներն առաջարկեցին փոխադարձ այցելություններ անցկացնել մաս երկու երկրների ՇԽ անդամների միջև: Ա. Հովսեփյանը նշեց, որ առաջիկայում իր գործընկերների հետ կքննարկի նման հնարավորությունները:

ՇԽ անդամ Պ. Շահինյանն առաջարկեց, որ ՀՄՀ-Հայաստանն իր արտագնա այցելություններին ներգրավվի մաս ՇԽ անդամներին: Ա. Հովսեփյանը ողջունեց առաջարկությունը:

### **Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ**

ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանն առաջարկեց հետևել ՇԽ նախագահողի ընտրության սկզբունքին ԿԽ նիստերի մասին տեղեկատվություն ներկայացնելու ժամանակ:

Խոսքը տրվեց նիստի նախագահող, ԿԽ անդամ Ա. Ոսկանյանին: Ներկայացվեցին դեկտեմբերի 10-ի ԿԽ նիստին քննարկված հիմնական հարցերը, առանձնակի շեշտադրում արվեց վիճահարույց հարցերի վրա:

### **Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ**

Շահերի բախման հարցերի վերաբերյալ հանդես եկավ ՀՄՀ-Հայաստանի տնօրեն Ա. Հովսեփյանը: Նա ներկաներին հիշեցրեց ՇԽ նոյեմբերի 22-ի արտագնա նիստին ՇԽ անդամ Ա. Վերանյանի արված հայտարարությունը առ այն, որ ունի համագործակցության եզրեր Ջրից դեպի շուկա բաղադրիչն իրականացնող ACDI/VOCA կազմակերպության հետ: Այս առիթով ՊՈԱԿ-ը կատարել է հարցում և պարզել, որ ՇԽ անդամի և իրականացնող կազմակերպության ներկայիս համագործակցության շրջանակներում շահերի բախման բացահայտ որևէ դեպք չկա: Այնուամենայնիվ, ՀՄՀ-Հայաստանը առաջիկայում կհետևի իրադարձությունների զարգացմանը:

Ներկայացված դեպքը որպես օրինակ բերելով՝ ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանը կրկնեց Շահերի բախման և էթիկայի հանձանխմբի ստեղծման իր առաջարկությունը, որի նպատակը կլինի բացահայտել այն դեպքերը, որոնք պարզաբանված չեն լինի ՊՈԱԿ-ի և ՇԽ անդամի կողմից:

Առաջարկության վերաբերյալ եղան մաս այլ հիմնավորումներ և առաջարկություններ, մասնավորապես ՇԽ անդամ Մ. Հովհաննիսյանն նշեց, որ շահերի բախման հետ կապված հարցերը սահմանված են ՇԽ Կանոնակարգում և նման հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտություն չի տեսնում: Մյուս կողմից, նախագահող Ա. Ոսկանյանն առաջարկեց ունենալ միայն շահերի բախման հարցերի հանձնաժողով, իսկ ՇԽ անդամ Պ. Շահինյանն առաջ քաշեց երկու առանձին հանձնախմբեր ստեղծելու առաջարկությունը:

Ի վերջո, ներկայացված բոլոր առաջարկությունները դրվեցին քվեարկության՝ հետևյալ ձևակերպումներով.

Ստեղծել շահերի բախման և էթիկային հանձնախումբ. կողմ՝ 2, ձեռնպահ՝ 9:

Ունենալ առանձին երկու հանձնախմբեր՝ շահերի բախման և էթիկայի հարցերով. կողմ՝ 1, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 9:

Ընդհանրապես որևէ հանձնախումբ չստեղծել. կողմ՝ 9, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2:

Այսպիսով, ձայների մեծամասնությամբ որոշվեց շահերի բախման և էթիկայի հարցերով որևէ հանձնախումբ չստեղծել:

## Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ

Նշվեց, որ ԿԽ նախորդ նիստում վարկային բաղադրիչի հետագա իրականացման, դրա արդյունավետության բարձրացման նպատակով որոշվել էր դիտարկել նաև ՓՄՁ ՋԱԿ-երի հետ համագործակցությունը: Այս առիթով Ջրից դեպի շուկա թիմի անդամ Ս. Մելոյանը պատրաստել էր ներկայացում՝ համապատասխան գործակալության հետ հանդիպման արդյունքում:

Մինչ ներկայացման սկիզբը Թ. Աբրահամյանը առաջարկեց ՀՄՀ-Հայաստանի ներկայացուցիչներին մեկնաբանել հարցի առաջ գալու հիմքերը և նախապատմությունը: ՀՄՀ-Հայաստանի տնօրենը տվեց հետևյալ մեկնաբանություն. վարկային բաղադրիչի առաջին փաթեթի ավարտի արդյունքում ԿԽ-ին ներկայացվեց հաշվետվություն իրականացրած աշխատանքների վերաբերյալ և առիթ հանդիսացավ ծավալելու քննարկում վարկային բաղադրիչի արդյունավետության, գյուղատնտեսական վարկավորման շուկայում դրա դերի և նպատակայնության վերաբերյալ: ՀՀ Վարչապետը հանձնարարեց ՊՈԱԿ-ին ներկայացնել վարկային բաղադրիչի հստակ նպատակները և դերը ծրագրի տեսլականի մեջ և առաջարկեց գտնել նոր ուղիներ մնացած գումարը առավել արդյունավետ տնօրինելու նպատակով: Այս առիթով ՀՄՀ-Հայաստանը առաջարկել է երկու հիմնական մոտեցում. առաջինը, պահպանել վարկային բաղադրիչը՝ շեշտը դնելով գումարների նպատակայնության և հստակ շահառուներին հասցնելու վրա, երկրորդը, վարկային բաղադրիչը փոխարինել երրորդային ջրանցքների վերականգնման ծրագրի ծավալները մեծացնելով: Երկու ծրագրերն էլ ուղիղ ազդեցություն են ունենալու շահառուների վրա:

ՓՄՁ ՋԱԿ-ի տնօրինության հետ հանդիպման արդյունքները ներկայացնելու համար ձայնը տրվեց Ս. Մելոյանին, ով իր խոսքում առանձնացրեց հետևյալ մոտեցումները՝

- ՓՄՁ ՋԱԿ-ը համագործակցում է միայն առևտրի, սպասարկման և արտադրության ոլորտում պաշտոնապես գրանցված ՓՄՁ-ների հետ: ՓՄՁ ՋԱԿ-ը չի համագործակցում ֆերմերների և գյուղատնտեսության ոլորտի հետ, որոնք առաջնայնություններ են համարվում ՀՄՀ-Հայաստան ծրագրի համար:
- ՓՄՁ ՋԱԿ-ը կիրառում է միայն երկու տեսակի ֆինանսական գործիքներ. վարկային երաշխիքների տրամադրումը և վարկերի տոկոսադրույքների մասնավոր սուբսիդավորումը: ՓՄՁ ՋԱԿ-ը բիզնեսի ոլորտին ոչ մի տեսակի վարկեր չի տրամադրում:
- ՓՄՁ ՋԱԿ-ը աշխատում է միայն գործընկեր բանկերի հետ, որոնց քանակը շատ սահմանափակ է: Գործընկեր բանկերից ոչ մեկը հետաքրքրված չէր մասնակցելու Ջրից դեպի Շուկա բաղադրիչի վարկային ծրագրի առաջին փուլին:
- 2009թ. հունվարին ՓՄՁ ՋԱԿ-ը կսկսի կիրառել ֆինանսական նոր գործիք՝ ներդրումներ կազմակերպության մեջ (վենչուրային կապիտալի ֆինանսավորում): ՓՄՁ ՋԱԿ-ը շատ հետաքրքրված է այս ոլորտում համագործակցելու ՀՄՀ-Հայաստանի հետ: Սակայն, քանի որ հաստատություններից յուրաքանչյուրն ունեն տարբեր նպատակներ, տարբեր թիրախային խմբեր, այսպիսով, համագործակցությունը տեսանելի չի:

Քննարկվող հարցի շուրջ նախագահողն առաջարկեց ՇԽ բոլոր անդամներին ներկայացնել իրենց դիրքորոշումները, որոնք ներկայացնում ենք ստորև՝

Մ. Հովհաննիսյան, Շ. Միքայելյան – Միանշանակ կարծում են, որ պետք է նախապատվությունը պետք է տալ երրորդային ջրանցքների կառուցմանը՝ դրանք ունեն կենսական նշականություն, առանց դրանց գյուղացին չի կարող ունենալ եկամուտներ: Նշեց, որ մեծամասամբ Հայաստանի գյուղերի ջրանցքները գտնվում են անհուսալի վիճակում:

Ն. Մայիլյան, Թ. Աբրահամյան – Վարկային բաղադրիչն անհրաժեշտ է պահպանել. առանց շուկայի և ֆինանսական հնարավորությունների գյուղացին չի կարող օգտվել ծրագրի մյուս արդյունքներից:

Կ. Զադոյան, Ա. Ոսկանյան – Համաձայն ՇԽ նախորդ նիստին որոշմանը իրենք ԿԽ նիստին պաշտպանել են և առաջիկայում նաև կողմ են լինելու վարկային բաղադրիչը շարունակելու որոշման օգտին:

Լ. Ասատրյան, Ս. Համբարձումյան, Կ. Մովսիսյան, Ջարուհի Արմաղանյան – Հաշվի առնելով առաջարկվող երկու տարբերակների և դրանց հիմնավորումների տրամաբանական լինելը՝ առաջարկեցին և կողմ եղան ևս մեկ հանդիպում անցկացնելուն, որի ընթացքում հնարավորություն կունենան լսել մասնագետների կարծիքները և արտահայտել վերջնական դիրքորոշում:

Ա. Տեր-Հովակիմյան – Կարծում է, որ ՇԽ-ը արդեն կայացրել է որոշում և պետք է հետևողական լինի իր որոշումների հետագա իրականացման համար:

Ամփոփելով առաջարկությունները՝ նախագահողն առաջարկեց վարկային բաղադրիչի հետագա գործունեության վերաբերյալ վերջնական դիրքորոշումն արտահայտելու նպատակով գումարել ևս մեկ նիստ:

Առաջարկությունը դրվեց քվեարկության և հաստատվեց 9 կողմ և 2 ձեռնպահ ձայներով:

ՇԽ առաջիկա նիստի օրը որոշվեց դեկտեմբերի 24-ը, ժամը 16:00-ն:

*Նախագահող՝*

*Ա. Ոսկանյան*

*Քարտուղար՝*

*Վ. Գրիգորյան*

*18-ը դեկտեմբերի, 2008թ.*